

Եղաւ քանդող, ժանտախտէն եւս աւելի կոտորիչ,
Ան կը սիրէ տերվիշի պէս միշտ նըստիլ գոհունակ
Քարի մը վրայ փլատակի եւ կըրծել ոսկրն իր շոպած:

Լըսէ՛, քաղքին պատուարին մէջէ ձայներ մեզ կու գան.
Դահիճ Յեղն ալ կը տօնէ իր յաղթանակն արիւնռուշտ:
Կիներ, տղաներ մորթելու յաղթանակն իր վատոգի:
Յեզ ոստանին, որուն վրայ լուսինն ահա կ'արտասուէ,
Մէկ մասն է արդ գերեզման, հանդիսավայր մասը միւս
Տաճիկն ահա բըռնկցուց իր խարոյկներն հըրճուանքի,
Յեծեծագին կըմախներ հանդիսաբար կը վառին.
Շուրջը սոթտուած թելերով խուժանն ուրախ պար կու գայ.
Արիւնազարդ քըրդուհին հինայագեղ մատներով
Կը զարնէ դափ, եւ Իսլամն, օտարակա՛ն, առջի հեղ
Այսօր գինի կը խըմէ մոխիրներուն ի պատիւ:
Կիսայրեացները անդին խաւարին մէջ կը հեծե՛ն.
Բայց վիրաւոր մ'աւասիկ կը կորթողուի մութին մէջ,
Յետոյ ծունկի վրայ ընդթարշ կը մօտենայ խուժանին,
Եւ հեզնօրէն, քըրքըջալիր արիւնտողիք կը թըքնէ
խարոյկի մէջ տօնական:
Կ'անցնին հովերն ողբագին
Դիակներուն վըրայէն եւ վըրայէն փլատակին,
Եւ արիւնի սերմերով, մոծիրներով հըրդէտի
Կ'երթան հեռու աշխարհներ գարուն մ'ուրախ ծաղկեցնել:
Օտարակա՛ն, հովերն այդ ահա ծովուն վրայ լուսեղ
Առագաստները նաւուդ գոգացուցին փըքուռոյց,
Ա՛լ մեկնէ սա դառն Երկրէն դէպի խաղաղ ափունքներդ,
Չի տատրակները մեռա՛ն, եւ դէղձենին խամրեցա՛ւ:
Երբ նաւդ անհուն սարսափով պատռէ ջուրերն ու փախչի՝
Յետապնդուած միշտ կայտռուն դըլփիներէն՝ որոնք մեր
Ծովախորշերն արգաւանդ եկան փընտռել դիակներ,